

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ  
Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրուած իւր պէտքէ ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱՒՈՅՍ Գրագրի  
ԳԱԶԻՔԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

# ԱՐՇԱՒՈՅՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏ ՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամին	60
Վեջանակայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան Գրագրի	20
Վեջանակայ	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնդրագրութեան վրայ է :

Կլիբագրութեան ուղղում  
գրողքիւնք ևս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ  
Կանխիկ վճարելի են

#### Ի Մ Ա Վ Գ Ր Ա Կ Ա Ն Ա Չ Դ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Փաս. բաժնա-  
ճորդներէն ջերմակցես կը խնդրուի որ բա-  
ճեհաճիւն նախորդ տարիէն մնացեալ պար-  
տուց կցեղով դրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ  
Տարեշրջանի բաժնակողմանքը, եւ հարկ  
չը թողոյ նկատաւոր դիմումներու, որով  
ճոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-  
ՎՈՅՍ արդէն բազմադրացի Տնօրինութեան :

#### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Նկատելով որ մեր ծանրածանր զբա-  
ղումները թոյլ չպիտի տան մեզ, նոր Տար-  
այ առթիւ մեզի ուղղուած այցեքարտե-  
րուն, նամակներուն, քարտ-քուրտներուն  
և հեռագիրներուն զատ զատ պատասխա-  
նել, Արշաւոյսի միջոցաւ մեր խորին  
չնորհակալիքը կը փութանք յայտնել ա՛յն  
բարեկամաց, որոնք յանկեղծ սրտէ հա-  
մակրութիւն ցոյց տուին մեզ :

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

#### ՔՕՂԱՐԿՈՒԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՄԵԼԻՔԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Քաղաքիս մէջ քիչեր կան, որ Մե-  
լիքեան ժառանգութեան վրայ գոնէ հա-  
րեւանցի տեղեկութիւն մը ունեցած չ'ըլլան :  
Այս ժառանգութեան հարցը, Մելիքե-  
անի մահուանէն ի վեր, 6-7 ամիսներ,  
անորոշութեան մէջ տարուբերուելէ և իր  
չուրջ գիշակներնու փոխակ մը խմբելէ  
յետոյ — ասոնց իւրաքանչիւրին անուննե-  
րը իրենց կարգին պիտի տրուին — հասաւ  
ժամանակը, որ այդ Աբբա-ժարիական ժա-  
ռանգութեան շուրջ հաւաքուած արտեղու-  
թիւնները ցարակելի հարուածով մը ջնջու-  
ուին և կորակոր հալածական դառնան :  
Ահա բուն իսկ այս պատճառաւ է, որ  
ճակատը խոշոր տառերով «Մելիքեան»  
թիւն Լսարան-Ընթերցատան» գրուած,  
բայց զգուշութիւն չունեցող և չունենալիք  
ըտարանի մի քանի անդամներուն անճարա-  
կութենէն անհատական սեփականութիւն ե-  
ղած կղերատիտ թերթին 61 թ. թուոյն  
մէջ ծանուցուած էր թէ՛ Մելիքեան ժա-  
ռանգութեան խնդիրը սուր կերպարանք մը

ստացած է : (Աղէքսանդրիոյ վարժարանն  
ալ սուր կերպարանք մը ստացած է եղեր,  
ըստ այդ թերթի վերջին թուոյն : )  
«Արշաւոյս» ի 83րդ. համարը ընթեր-  
ցողները, արդէն համառօտ տեղեկութիւն  
մը ստացած են Մելիքեան ժառանգութեան  
չուրջը դարձածներուն վրայ. սակայն ան-  
պատեհ չենք համարիր աւելի մանրամաս-  
նել ժառանգական այս մանուածապատ  
հարցը, որ թերևս ապագայի մէջ շատ մը  
տեսակէտներով կրնայ օգտակար ըլլալ,  
այս կարգի պատահարներու առջև դըտ-  
նուողներուն համար և միևնոյն ատեն մենք  
ալ՝ կարգ մը միամիտ պարծենկոտներու  
խեղաթիւրեալ պոռոտախօսութեանց, սը-  
տախօսութեանց և յերիւրանքներուն պա-  
տասխանած կ'ըլլանք :

Նախ՝ ըսենք թէ՛ ո՛վ էր Մելիքեան  
և ինչո՞ւ անոր ժառանգական խնդրոց շուրջ  
այսչափ աղմուկ յարուցանել կուզէ կղե-  
րամիտ թերթը, եթէ կրնայ . . . :

Հանգուցեալ Մ. Ս. Մելիքեան Գա-  
հրէի Մէնչիյէ թաղին Սալիպիյէ կոչուած  
տեղը, իր փեսային հետ փոքրիկ խանութի մը  
մէջ սեղանաւորութիւն կ'ընէր, 40 է աւելի  
տարիներէ ի վեր :  
Անցեալ 1900 տարուոյ Մայիս ամսոյն  
մէջ, Տիար Մ. Ս. Մելիքեան — ինչպէս ա-  
մեն մահկանացուի վիճակուած է — յան-  
կարծակի յաւիտենականութիւն կ'ուղևորի.  
Թողլով այրի մը, 9-10 տարեկան մանչ  
զաւակ մը, և երկու ամուսնացեալ աղջիկ-  
ներ :

Հանգուցեալը իբր ժառանգութիւն իր  
կողակցին, մանչ զաւակին և երկու աղջկանց  
կը ձգէ նաև հարստութիւն մը, մօտ 10-15  
հազար Եգիպտական ոսկուոյ. — ոմանք մին-  
չև 20 հազար և աւելի ոսկի կը կարծէին հան-  
գուցելոյն նիւթական կարողութիւնը : —

Ահա աւսիկ Մելիքեան ժառանգութիւնը  
երկու բառով : Եթէ սակաւ ինչ վիպագրի  
հովեր առնել հարկ ըլլար, պիտի ստիպ-  
ուէինք Թափառական Հրէի նման հատոր-  
ներ լեցնել. հատորներ՝ որոց մէջ երևան  
պիտի գային Ռօտէնի նմանող դէմքեր,  
կարճազգեստ և երկայնաքիթ ճիզուիթներ  
և լին. . .

Արդարև Մելիքեան ժառանգութիւնը,  
ինչպէս այրած սրտերը կուզեն հասկցնել,  
սուր կերպարանք առնելու շատ մը հետա-  
քըքրաչարժ պատճառներ ունէր, և ունի,  
սակայն ամենատկար խելագատակներու  
գործ կը նկատենք այդչափ փոքրիկութիւն  
և կարի սահմանափակ և անորոշ ծանօթու-  
թիւններ, բազմակողմանի բացատրութիւն-

ներու կարօտ խնդրոյ մը համար : Մելիքե-  
ան ժառանգութեան սուր կերպարանք մը  
ստանալը՝ ո՛չ թէ նախնական դատարանի մը  
առջև բացուած դատի մը վրայ տրուած  
վճռոյն մէջ պէտք է փնտռել, — դա ո-  
րովհետև բեկանիկ է — այլ պէտք է գիտչ  
նալ թէ Առաջնորդարանները ի՞նչ կը ու-  
նեցան այդ գործին մէջ և թէ՛ կառավարու-  
թեան կողմէ անոնց տրուած իրաւասու-  
թիւնները ինչ ձևերու տակ կը գործա-  
դրուին, և թէ ի՞նչ կերպեր ուզած են կատա-  
րել ոմանք՝ Առաջնորդարանի տրուած այս  
իրաւասութիւնը իրենց անձին ի նպաստ չա-  
րաչար գործածել ուզելով : Ահա վէրքը,  
որուն վրայ մեր մատը պիտի դնենք յա-  
ջորդ անգամներով :

#### ԾՆՈՒՆԻՒԻ ԵՐԳՍ

Ձահ՝ անտղին պէս ուղեցոյց Արեւելքի մոգերուն,  
Այս արցունքի հովտիս մէջ մառախուղով շրջա-  
պատ՝  
Ճառագայթէ՛, լոյս տո՛ւր ինձ, յոյս, առաջ-  
նորոս եղի՛ր դուն,  
Որոնած սուրբ Բէթղէէնս, տա՛ր, հասցո՛ւր իս  
անվճատ :

Անորոջ է ճանապարհս, ուր դիմելու չիմ գիտեր.  
Ընդհատող անցքս ամէն կողմ խրամատներ չեն  
պակսիր,  
Կ'ընթանամ խոնջ ու խարխափ շալակած իող ու  
վշտեր,  
Տառապանքովս կը բերկրին անդին մարդիկ ան-  
բասիր :

Մաշող միտոյն կարօտով թրթրակալու անկուճէս,  
Նետ-ակնարկներ աչքերու՝ գաղտագողի յառ վը-  
բաս,  
Ներսէս վէրքեր կը բանան, բայց դուն անոնք  
կը խնամես :

Առանց քեզի չեմ կրնար սովալ. գիտեմ, կ'ընկ-  
ծիմ շուտ.  
Դուն երկնի շունչ մ'ես սակայն, միշտ ինձ  
պիտի գուրպուրաս,  
Աղջամղջուտ կեանքիս այս փոպարներուն մէջ  
փըշուտ :

Ինձ հեշտ շունչ մ'ալքիլես կը շընջէ խորտախոյս,  
Այն շունչը սըղոխն է քու թեւերուդ լուսաթոյր,  
Դուն կը թռչտիս այն սեղեր, թռչտէ՛, ու թո՛ղ  
քեզմով, յոյս,  
«Փառք ի բարձունս» ես լըսեմ Բեթղէէնս խըն-  
կարոյր :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹԱՐԱՊԼՈՒՍԻ նախկին կառավարիչ Գեմալ Պէյ որ քաղաքական պատճառներով Եւրոպա փախած էր, երէկ Մարտէլէն եկող շոգենաւով Եգիպտոս կ'սպասուէր:

ՄէճիՏիՅէի Կրդ. աստիճանը ստացած է Բանտերու վարչութեան գրագիր Արամ պէյ Փափազեան:

ՊէՅՈՒԹԵԱՆ աստիճան ստացած է Տիար Արթին Ստեփան, որ Արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօնակալ է:

ՍՍՄԱՆԻՅԷԻ Կրդ. կարգը ստացած է մաքսատան մէջ հաշուակետ Տիար Յարութին Թրնիլըրեան:

ԱՌԱՋՆՈՐԻ Գեր. Այվազեան եպիս. որ շարժած օրը Աղէքսանդրիա գացած էր, կիրակի օրը նախագահած է ժամը 11 ու կէսին Նուպար Փաշայի յիշատակարանին բացմանը: Վսեմափայլ Պողոս Փաշա Նուպար և բազմաթիւ Հայ երեւելիներ ներկայ եղած են այս հանդիսին:

Շաբաթ օրը, Նուպար Փաշայի դադար, որ արժամապէս Առաքել Պէյի նը. կողմին մէջ դրուած էր, ի ներկայութեան Վսեմ. Պողոս Փաշայի և Գեր. Սուլայման Կորդի, իր նոր շիրին մէջ փոխադրուած է:

ՆՇԱՆԱԲՈՍՈՒԹԻՒՆ

Կիրակի օրը յետ միջօրէի, ի Սայիտա-Չէնապ, Տիար Յակոբ Տէօվլէթեանի բնակարանին մէջ՝ տեղի ունեցաւ նշանախօսութեան հանգէսն, Տիար Յարութ Մ. Հաճաթեանի, ընդ Օրիորդ Ագապի Յ. Տէօվլէթեանի:

Երկու կողմանց ազգականներն ու համակիր բարեկամները ստուար թիւ մը կը կազմէին, որոց կը նախագահէր Արթ. Տէր Եղնիկ Քահանայ Պաշունի:

Տիարք եղբարք Նշան և Յարութ Հաճաթեան, առևտրական հրապարակին վրայ շատ կարևոր տեղ մը գրաւած են այժմ, և իրենց մեղուական գործունէութենէն կը

հետեցնենք թէ՛ քիչ ատենէն իրենց ապարէշին մէջ գնալ շատ աւելի պիտի յառաջադիմեն և նոյն իսկ ամենէն առաջին տեղը պիտի կրնան գրաւել:

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 12 Յունուար. — 200 նոր Պօէր գերիներ Ս. Հեղինէ հասան:

Քար 12 Յունուար. — Ամբողջ գաւառները բացարձակ ապստամբութեան մէջ են. կառավարութիւնը ստիպուած է զինել բոլոր հաւատարմականները:

Աթէնք 12 Յունուար. — Պաշտօնական ազդուրէ եկած լուրերու նայելով՝ Մակեդոնիոյ մէջ կացութիւնը շատ անտանելի է, Պուլկար ապստամբախումբերու շարունակ սահմանադրուելը անցնելուն պատճառաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէյրաէն (Մօզամպիք) 6 Յունուար թըւականաւ հետեւեալը կը գրեն,

«Գերմանական Հէրցօկ շոգենաւը հոս հասաւ 136 Հապէշով և Սօմալցիներով, որք Ռօտէզիայի հանքերուն մէջ պիտի աշխատէին:

«Յամաք ելլելու պահուն, ասոնք ապրտամբեցան, որովհետեւ անոնց կլլեցուցեր են նաւուն մէջ թէ՛ չլթալակապ պիտի աշխատին: Հապէշները կամրկակին վրայ ամրացան և չուզեցին դուրս ելլել. նաւապետը ստիպուեցաւ Բօրթուկացի ստիկաններուն և զօրքերուն գիւմել, ապստամբները նաւէն հանել տալու համար: Կուրծք կուրծքի մեծ կռիւ մը եղած է, որ ճիշդ ժամ մը տեւած է: 9 Բօրթուկացի վիրաւորուած են, իսկ Հապէշներուն և Սօմալցիներուն կորուստը 1 մեռեալ և 26 վիրաւորեալ է: Կուրծք պահուն 56 ապստամբ ծովը նետուած են, և մնացեալ 26 հոգին բռնուած ու բանտարկուած են:»

ՏէՅԼԻ ՆԻԻՉ նախկին ազատական մեծ

կը հասկնաք անշուշտ. օրին մէկը մեզի կ'ըսեն թէ թագաւորը հոն է, թէ՛ Տօն Քարթլու կուզայ, այն ատեն պարզ բան է, էին խմորը մէջտեղ կ'ելլայ և անմիջապէս մեր Պասք գիւղացիները կը վազեն և թեկնածուին (Տօն Քարթլու) բանակ մը կը հայթայթեն: Եւ գիտէք ինչո՞ւ համար, որպէսզի գեղեցիկ համազգեստ մը կրեն, քլիւարկին ակաւնուն վրայ և սրափող ի գլուխ գիւղերը մտնեն և հրացաններն խուրճ ընկնով, երգեն ու աղջիկները խաղցնեն, նոյնպէս նաեւ գնդակներուն սուլումը լսելու համար. որովհետեւ մեր Պասքերը քաջ են. քիչով կ'ապկին և հերոսաբար կը մեռնին: Միայն մնաք բարձր հուշմարտի, խնձորկներ, խեղճ աշխարհիս կեանքը: Բոլոր օրը կը կրուէին. այսպէս երեք տարի շարունակ կուռեցան. որչափ ժամանակին հոս, բոլոր այս քայքայուած ճամբաները բռնուեցան միեւնոյն ազգին պատկանող մարդերէ, որք միայն իրար փողոսել կը ջանային:

Պիլպատի պաշարման պատմութիւնը գիտէք հարկաւ, որ Քարթլուները քաջանի պէս սեղմած էին, քաղաքը ազատել պէտք էր և Սէն Մէպատիէնի և Պիլպատի մէջտեղի բոլոր կերճերը գրաւած էին. Քարթլուները յարձակումները ետ կը մղէին և իրենց վրայ զրկուած զօրագուհիները ստիպով կը յաղթահարէին: Այս կողմերուն լիբայ հրամայող Քարթլուներուն

թերթը, որ Թրանսպարի պատերազմին ըսկիզբները Չէմպրըլէյնի կողմը կը բռնէր և կայսերական քաղաքականութիւն մը շարունակեց, իր սխալ ուղղութիւնը լաւ մը հասկնալով, այժմ կը յայտարարէ թէ՛ իր աւելի ազատական ուղղութիւնը պիտի բռնէ:

Տիար Գիուսան հետեւեալ բաց նամակին հրատարակութիւնը խնդրած է մեղմէ:

Լսարանի թերթին . . . Վարչութեան Ի քաղաքիս

Բարձր. Խախիլի գահակալութեան տարեգարձին առթիւ կազմակերպուած գրական մրցումին մասնակցելու համար կարգադիր Մասնախմբին զրկած ոտանաւորիս հրատարակութիւնը չէի խնդրած ձեզմէ. այլ պարզապէս՝ յանձնելով այն ձեռք պաշտօնեային, ըսած էի որ եթէ թերթին վարչախումբը ուզէ, կրնայ նրա սարակիլ. հետեւաբար թէ ինչ նպատակով «Հեղինակի խնդրանք կը հրատարակենք» գրած էք, չեմ գիտեր, բայց կը յիշեցնեմ ձեզի որ շատ ճիշդ կը լինէր, եթէ «Հեղինակի հաճութեամբ» գրած ըլլայիք:

Պէտք է գիտնաք որ դուք ինձ նոյն օրէն երկու օր առաջ օգտակար եղած ըլլալնուդ համար էր որ ես իմ սոյն ոտանաւորս ձեր թերթին հրատարակութեան կուտայի, փոխադարձ ձաքար ձեզի օգտակար ըլլալու դիտուումով եզրէ թէ՛ այն հրատարակուած տեսնելու փափաքով: Ասկէ զատ երբ ուրէ լրագրի մը գրութիւն մը կ'ուզարկեմ, գիտեմ որ խմբագրութիւնը ազատ է այն հրատարակելու կամ ո'չ և և հետեւաբար այս վերջի պարագայէն արտուղելու գէշ սովորութիւնը չունիմ երբէք: Որչափ գոհ կը մնայի ուրիմ ձեզմէ, թէ որ չհաճէիք հրատարակել ոտանաւորս, եթէ հիւրընկալելու արժանի դատած չէիք շահն. իսկ եթէ ընծայած էիք անոր կարեւորութիւնը՝ կամ եթէ լոկ ձեր թերթին բաց մնացած էջերն գոցելու համար ստիպուած էիք հրատարակել, գէթ չեղած բան մը, եղած է չ'ըսէիք:

ԳԻՌՈՒՍԱՆ

Գահերէ 12 Յունուար 1901

ՎԻՊԱԿ

142 թիւ Արշալոյսին, առաջին էջի, Բրդ. սիւնակին մէջ, «Տիւրք այլ իրական երեւոյթները» խորագրով յօդուածին 4րդ. սողին «ալեացը» բառը՝ ալուցը, 17րդ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԺՈՒԼ ՊԼԱՐՔԻ

ՍԻԿԱՐԷԹԸ

—Տօն Քարթլուի վերջին պատերազմին ժամանակներէն է. Պարոնս, բոլոր այս Պասքեան երկիրը, այս Սէն Մէպատիէնի շրջակաները, այս կուրթուզգօաթի լեռները, ամեն տեղ արիւն և վառօթ հոտեցաւ . . . ամիսներ երկա՛ր ամիսներ: Հարկաւ գիւղին մէջ տեսաք սեւ և կոտորուած պատերը. այնպէս չէ՛: Լաւ ուրիմն ասոնք, ազարակներ, տուներ էին, կենդանի ու երջանիկ բնակարաններ, որք հիմա աւերակ են, գերեզմանատուններ դարձած են: Ահաւասիկ պատերազմին արդիւնքները . . . :

Կը կուռէին և տեսնելու էիք ինչպէս: Քարթլուները մէկ կողմէն և Մատրիտի կառավարութեան զօրքերը միւս կողմէն: Այս ճամբաներէն այնչափ միտաւորներ վիրաւորեալներ, խեղճ տղաքներ անցած են, որք կը հարցունէին ինչո՞ւ . . . ինչո՞ւ . . . Ո՛հ քաղաքային պատերազմները, և երբ մարդ մտքն կ'անցընէ թէ ստիկայ վաղը կրնայ վերսկսիլ . . . կարելի չէ՛, այնչափ տխուր են մարդիկ որ:

պետը Մուքարրակա կը կոչուէր. ճշմարիտ հերոս մը. ազնիւ պարոնս, Սպանիական բանակէն նախկին սպայ մը, որ իր սուրը Մատրիտի կառավարութեան զրկած էր սպայէն ըսելով. «Ասիկայ ուրիշի մը սուրէք և թող նա իմ գէմս կըռուի. ասկէ յետոյ կընկիւր սուրս իմ թագաւորէս առած եմ, » 3) ասրեկան էր, գեղեցիկ, խոշոր, սքանչելի մարդ մը: Անկէց լեռ կը պանակներ և ձեռքէն չէր ձգեր: Իրեն գէմ ամենալաւ գունդերը կը զրկէին և ամէն օր նոր զօրքեր, բայց միշտ կը տեսնէինք որ խեղճ գիւնդները, կաղ վերակապերով փաթաթուած, և տասանորդուած ետ կը դառնային արիւնտա խրճաններու մէջ բերելով իրենց սպաները, որք յուսահատութիւն գլուխներն կ'երեւցնէին ըսելով, « ահա՛, Սպանիայի համար Սպանիան կը մեռնին »:

Այս Մուքարրակին համբաւը ազգային բանակին իւրաքանչիւր պարտութեան հետ կը մեծնար. իրարու կ'ըսէին, թո՛մաս Մուսալաքարէկին է որ կուռայ. գիտէք Մուսալաքարէկին ո՞վ է. հին ժամանակուան Քարթլուեան կուրթուրու Բայաթէնը, անունն ալ միւսին նման, և որ ժողովրդեան աչքին Մուքարրական վրկական անձ մը Սիտի նման ժողովրդեան բողոքին պետը ըլլալ կ'երեւար:

Հէրնանի հրամայող Սպանիացի զօրավարը —այս ճիշդ այն քաղաքն է ուր ինչպէս որ անցեալ օրը կազմէր կ'ըսէր, ձեռք գրագէտ Հիւկօն իր

տողին «անդրանիկ» բառը՝ անդրանկածին, և երկրորդ էջին, առաջին սիւնակին ՅՂդ. տողին «այլասեռ» բառը՝ այլասեր կարգալու է:

ԱԶԴ

Յառաջիկայ շարաթ օր առաւօտեան ժամը ճիշտ 10 1/2 ին միւտնդի առթիւ մասնաւոր պաշտօն պիտի կատարուի Ամերիկացւոց մեծ մատուռին մէջ, Էօզպէթիյէ, և երգիչ խումբին վոզմէ պատրաստուած խիստ ճաշակաւոր և ժամանակին յարմար երգերով պաշտամունքը պիտի ոգևորուի: Այս երգերուն պիտի միանայ շուրթակը և երգեհոնը, այնպէս որ բոլորովին նորութիւն մը պիտի ըլլայ սոյն ժողովը: Բոլոր նուագասէրները կը հրաւիրուին ներկայ գտնուելու:

ՆԱՍԱԿ ՓԱՐԻՉԷՆ

Փարիզ 7 Յունիս 1901

ՄԱՀԱԳՈՅԺ

Սրտի խորին տխրութեամբ կ'արձանագրենք մեր հայրենակիցներէն միոյն Պ. Յովհաննէս Շաւարշի մահուան լուրը:

Յովհաննէս Շաւարշ բնիկ թոքաոցի էր և Սանասարեան վարժարանի առաջին աշակերտներէն մին եղած էր, որուն սակայն ամբողջ դասընթացը չ'աւարտած, մօտ չորս տարիներէ ի վեր Փարիզ եկած էր և կը յաճախէր գրականութեան համալսարանի դասախօսութիւնները:

Դպրոցի սեղաններու վրայէն սկսած Պ. Յովհաննէս Շաւարշ գրած է, մանաւանդ բանաստեղծութիւններ. Փարիզ եղած ժամանակ թղթակցութիւններ գրած է «Մը շակ» ին, իւր բանաստեղծութիւնները հրատարակուած են «Բերալին» ի մէջ «Հրուշան» ստորագրութեամբ, աշխատակցած է նաև Հայերէն ուրիշ թերթերու:

Բայց Պ. Յովհաննէս Շաւարշ, իւր ուրոյն տեղն ստացաւ «Համալսարան» թեր-

թին մէջ, ուր կ'ստորագրէր «Շաւարշ», «Հրուշան» և «Յիշէ Սա» ելն, և արդէն յիշեալ թերթի խմբագիրներէն մին էր, և հոգեով սրտով ինքզինք տուած էր «Համալսարան» ին:

Մէկ տարիէ ի վեր խեղճ երիտասարդը թոքախտէն կը տառապէր. այս ամառ արդէն իւր թոքերէն մին բոլորովին ոչնչացած էր, և հազիւ կարող էր շունչ քաշել, մի քանի ամիս սնկողնոյ ծառայելէն յետոյ բժիշկները խորհուրդ տուին որ կամ հայրենիք վերադառնայ և կամ երթայ Ալճէրիա. բայց ինչ օգուտ, արդէն սարսափելի արտը իւր աւերումները գործեր էր... և այսօր իւր մահուան տխուր լուրը կ'ստանանք, հազիւ 23 տարեկան ծաղիկ հասակին մէջ:

Զգայուն բանաստեղծ մ'էր Շաւարշ և գողտրիկ ոտանաւորներ գրած ունի, որոնց ոմանք հրատարակուած և շատեր կը մնան անտիպ:

Օտար երկրի մէջ ուսանող եղաւ և օտարագոյն երկրի մը մէջ (Ալճէրիա) մեռաւ խեղճ երիտասարդը, հեռի ազգականներէ, բարեկամներէ և սիրողներէ:

Հանգիստ մեր ընկերին, հայրենակցին և պաշտօնակցին, և մկիթարութիւն իւր դժբաղդ ծնողներուն, որոց մէկ հատիկ զաւակն էր Յովհաննէս և որուն համար բաւական զոհողութիւն, ծախք և կարօտ քաշած են:

Դեռ չգիտեմ թէ ի՞նչ տնօրինուած է հանդուցելոյն թաղման և յուզարկաւորութեան համար. մարմինը Ալճէրիա պիտի մնայ թէ Փարիզ պիտի բերուի հոյն տալու:

Մ. Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԷ

Զինացի հրատարակիչները ի՞նչպէս կը մերժեն տպագրել իրենց գործին չ'եկած պարագայ, ոչինչ հեղինակութիւն մը, և ի՞նչ քաղաքավարութեամբ զայն հեղինակին կը վերադարձնեն:

Ահաւասիկ մերժումի նմոյշ մը.

Կուլար այդ կիրճերուն մէջ իր գեղեցիկ գունդերուն ձիւնի նման հալիլը տեսնելով. իրեն այնպէս կուգար որ բոլոր այն քաղերը՝ որք ճամբան ցանցնուած էին՝ իր զաւակներն էին. կարծես թէ զինքը կ'սպաննէին եւ ո՞վ էր այդ ամենը ընողը. Մուքարրական, Մուքարրակացի վասիկօնները, Քարլոսեանները:

Մեր Կարլոսոն դեռ խօսքը չէր աւարտած երբ զինուորով լեցուն հրապարակին մէջէն, ուր իրելուան խաւարը կը թանձրանար, իր սպայակոյտին առջեւ գեղեցիկ խոշոր երիտասարդ մը տնկուեցաւ եւ կոպտութեամբ զօրավարին երեսըն ի վեր նայելով ըսաւ:

—Եթէ Մուքարրական զարնեմ, ուզանս պիտի սա՞ք:

—Ո՞վ ես գուն ըսաւ Կարլոսոն:

—Տեղացի մը, Ժուան Արաքուիլ. մարդ մը՝ որ մեռնելէ չ'վախնար բայց երդուած է հարուստ ըլլալ:

Զօրավարը ոտքէն մինչեւ գլուխը զննեց այս մարդուկը:

—Դուն Կուլարուկացի ես, ինչո՞ւ Տօն Քարլոսի բանակին միացած չ'ես:

—Որովհետեւ խերն եմ անիծեր անոր ալ բոլոր այս աշխարհիս ալ մէկ սերած աղջիկէս զատ:

—Նշանա՞ծ մը:

—Ո՞հ եթէ նշանած մը ըլլաւ, ալ ինչ կ'ուզէի. ո՞չ. ազարակատէրի մը աղջիկն է, որ

«Քու ձեռագիրդ հեշտութեամբ և հիւստամբ կարգացիրք, մեր նախահարց «ուկորներուն վրայ կ'երչնունք որ ատանկ «գլուխ գործոց մը կարգացած չէինք»: «Դժբաղդաբար եթէ հրատարակենք Վեհափառ կայսր զայն իբր դասանիշ (քրիթթիթիթ) պիտի սահմանէ և երբէք թոյլ չ'պիտի տայ անկէ նուազ կարեւոր գործ մը հրատարակել. Գիտնալով որ ստոր «համահաւասար գործ մը տասը հազար «տարուան մէջ մեր ձեռքը չ'ընար հասնիլ, «հետեւաբար «գոզգոշելով» քեզի կը վերադարձնեն» աննուան ձեռագիրդ և տասը «հազար ներողութիւն կը խնդրենք»:

Ըսելու չէ՞ թէ Զինացիները ամէն գիւտերու հետ մերժումի արուեստն ալ հնարած են:

ԱՂ ԿԵՐԷՔ. — Նիւ-Եօրքէն «Տէյլի-Մէյլ» լրիւրուած հեռագրէ մը կը հասկըցուի թէ՛ Զիքակօի համալսարանին բրօքէսէօր Լիպ մեծ գիւտ մը ըրած է. Հասարակ աղբ մարդուս երկարակեցութեան ամենէն լաւ միջոցն է եղեր:

Նշանաւոր երկրաչափ Պ. Ժան Պէրլիէ, Փարիզեան թերթի մը նամակ մը լրիւրած է, որուն մէջէն կը քաղենք հետեւեալ կէտերը:

«Շատ ժամանակ կայ որ —կը գրէ Պ. Պէրլիէ— Փլորտ Պէրնար մեզի բյորիտը սր սօսիումի (հասարակ աղ) բազմազան օգուտները ցցուցած է. Շատ մը փորձեր եղած են այս մասին, որք հրաշալի արդիւնքներ տուած են:

Միայն սա հաստատել կուզեմ թէ՛ Տօքթօր Կալօրէն Կամպէթթի մտերիմ բարեկամը, իր բարեկամներուն կը յանձնարարէր՝ որը մէկ երկու անգամ բաւականաչափ խոհանոցի աղ ուտել, այս աղը —կ'ըսէր— մարդուս ներքին գործարաններուն հաւասարակշռութիւնը պիտի պահէր և այս բեծիւր չարունակողը պիտի կրնար ապահով ըլլալ երկար տարիներ ապրելու:

Հետեւաբար բրօքէսէօր Լիպ մեր Փրանսացի գիտնականին հաստատածը միայն կը կրկնէ:

ՌԷՔԻԱՄ ՄԸ. — Ամերիկեան թերթերը հետեւեալ ռեֆրա՛նը կը հրատարակեն:

Ինծի պէս աղքատի մը փոխարէն խիստ հարուստ է եւ զայն ինծի աւալու համար գրամ կը պահանջեն:

Արաքուիլը հոս լաւ կը ճանչցուէր, ամենքու ալ իր պատմութիւնը գիտէինք, գիտէինք Հայր Շէկարէի աղջկան համար ունեցած սէրը, որ Կուլարուկացի բարի հողատէր մ'էր, հոս տեղուանքը ունէր և կամ 5 ազարակ եւ գեղեցիկ մրգատաններու տէր էր, ուր խնձորներնեբը իրենց բեռին տակ կը ձունչէին, եւ խնձորօղի մը կուտային որ տեսնելու բան էր. ձեր Փրանսայի այնչափ գովուած խնձորօղին խմած չեմ. բայց ըսէք, խնդրեմ Կուլարուկացիք ձերինէն լաւագոյն չէ՞... սո ըսողը մինակ ես չ'եմ:

Հայր Շէկարէյը Հէրնանիի եւ Սանթա-Պարպարայի բերքին մէջտեղը կը բնակէր, Սէն Սէպասթիէնէն պալերնո: Գ ճոնկէ անցաւ, իր Բէքա աղջիկովը այնչափ կ'սպասանար Հոյր Շէկարէյ որչափ Անտալո լուհի մը իր գոհարներովը: Կը սիգար նա երբ սղջիկը մեր երեկոյան ժամերգութեանց, մեր խրատմանքներուն եւ Ռօմէրօսներուն կը տանէր: Ռօմէրօսներուն մէջէն որ կը նշանուին մեր մէջը յաճ սյն առանց ծնողներու հաւանութեան. խնդրով, խաղալով, պարելով, այնչափ շուտ կ'ըլլայ որ սիրտը կը սիրահարուի եւ կեանքը կը տրուի...:

(Շարունակելի) Թարգմ. ԼԵՒՈՆ

տղայութիւնը անցուցած և անունը յիշատակին մէջ պահած է — որ իր զօրքերը Մուքարրակայէն պաշտպանուած կիրճերուն վրայ կ'արձակէր. կատաղութենէն խենթեցած էր: Սօսք տուած էր կիրճը անցնիլ, պէրէթաւոր մարդիկը ջախջախիլ եւ մինչեւ Պիլպաօ իրեն արիւնոտ ձամբայ բանալ: Ո՞հ, այս իւրաքանչիւր յարձակման պարտութիւն մը, իւրաքանչիւր գրոհին կէս-պարտութիւն մը: Զինուորները հոգիներն ելած, ծանրաքայլ եւ վլխիկոր ետ կը դառնային ձամբաները մեռելներ ցանելով:

Իրիկուն մը Անունթամէնթօի հրապարակը, հոն վեր կը դիտէր Զօրավարը իր զինուորները, որք մէջըբերնին կոտրած դանդաղաբար իրենց գիւղատրոհները կը մարտէին — մինչդեռ հեռուն, լեռներու կողմէն Մուքարրակայի թընդանօթը միշտ կը գոռար եւ մենք կը տեսնէինք ծուխին, հովխաներուն խորէն, կարմրցած լեռներու երկայնքէն բարձրանալը, Զօրավար Կարլոսոն — րօսին տակ ձերմակ գլուխ մը, րօս մը՝ որ ժամանակին Մարօքեան գնդակներով ծակծկուած էր — կ'ըսէր կռուիները ցցնելով, աչքերը բարկութեան կրակով լեցուն:

—Ո՞հ, այն Մուքարրական, այն Մուքարրական, այն թշուառական Մուքարրական, ա՛հ կաշիս կուտայի իրենին փոխարէն, եւ զայն սպաննողին հարստութիւն մը:

Բարկութեան յիմարացած էր, գրեթէ

Բազմ Թագապետ (Քաղաքապետ) Ուսուցիչ Թագապետ անուն Եանքի մը, իր հայրենական հողերուն կը յանձնարարէ թէ անձնասպան ըլլալ ուզողները իրեն գիտելով շատ գոհ պիտի մնան: Կը ծանուցանէ թէ Պոլսու տալական կրօնաւորէ մը յորոված բազադրութիւն մը ունի, որով մարդ ակնթարթի մը մէջ առանց ցաւի անձնասպան կ'ըլլայ: Վճարագին 10 տոլար:

1917-ի Վիճակագրական տարեկան ԲՐԷՏԻ ՅՈՒՍԻՅԷ ԷՃԻԲՍԻԷՆԻ 15 Յունուար 1901

Table with 2 columns: numbers and their corresponding values. Includes numbers like 29063, 16648, 31151, 58759, 81569, etc.

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: years and values. Includes years like 1901, 1902, 1903, 1904, 1905, etc.

Table with 2 columns: years and values. Includes years like 1901, 1902, 1903, 1904, 1905, etc.

ՄԱՆԿԱՍԱՐԸ ՏԻԿԻՆ ՍՈՍԻՅԱԿԱՆ ԱՂԳԱՊԵՏԵԱՆ Եարա-Ապրիլ-Ագիգ

Վերջերս իւր բնակութեանը Խորհրդակցութեան փոխադրած է Եարա Ապրիլ Ագիգ, Ալի փաշա Ենթիքի պարտիզին դիմաց, Անձեմ պէյ Ապրիլ Բազմի 20 թիւ սեփականութեան մէջ: Տիկին Սօֆիկ Ագագպետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիքերեան ազգայնաց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն: Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՄԻՒՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՈՒՄ

Գանի որ ՍԷԼՎԱՃԱՆ վաճառատան մէջ (ի Մուսթէ) պիտի գտնէք միմիայն 22 ՎՐԵ ի նիքէ, կոթէն լարող սիրուն ծամայոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւոցայոցներ 120 ՎՐԷ Ե սկսեալ մինչև 2500 ՎՐԷ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէ, և քսիտէ ժամայոցներ, պատի և քոնալի բողմազան Բանտի շերտ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք: Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկէսի միօնօկրաֆիներու:

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՅ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթըլ Օրթէլի ճիշդ գիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից: Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱԲՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Այլաբնի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են եւ ասոնցմէ մինչև ցարէ 17.000.000 ծախուած է: 400 և աւելի վկայականներով եւ մեքայներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ:

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է. ՀԱՅԹԱՅԹԻՅ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՅ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՅ Ե. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յատկանշին:

Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայնից համար, յաճախորդաց տուններուն մէջ: Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն ինչ մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900 ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՐԸ Օսմանիյի դեղատանին դիմացի փողոցին մէջ:

- Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին: Այցեխարտեր, Երգարտարաններ, Գիրքեր, Հրատարակչութիւն, Մանկագրքեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմարներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերն: 1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ: 2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիւրուած է եղեր: 3. ՀԱՒԱՔԱՅՈՒՑ Հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լևոն Եղիազարեանից: 4. ՉՈՒՄՐԱՆԻ Անիքթոններ և ժողովրդական վէպերներ կամ Մարգարային կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Ա Ձ Դ

Եզրկատարնակ ազգայնոց կը փութանայ ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէն մեկնած ըլլալով պիտի եզրկատարի համար Արևելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է գ. Լեւոյն թեքթիւն բաժանորդագրութեան և ն. ի մասին: Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպարան գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով: Քաղաքէն հետո բնակող անձեր պետք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոստով զուարմար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ. վարժարանն ի Տարապէլ կիւնէն:

Ա. ՊԱՆԵԱՆ Մ Ա Ք Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն) ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՐԱԿՐԱՏՈՒՆԸ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵՔ ԵՒ ԿԱՐԵՐՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահերէ

Այլապէս մէջ գտնուող արդիւնք և է ինչ կերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրաշալակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ: ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Ազգ. քանդակար